



Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

## ՅԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒԲ ՄԱՐԶԻ ՄՊԻՏԱԿԻ Ա. ՄՅԱՍԵԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ №1 ՀԻՄՆԱԿԱՆ ԳՊՐՈՑ» ՊՈԱԿ

Թեմա՝ Միջառարկայական կապերի հաստատումը կենսաբանության դասավանդման գործընթացում:

Վերապատրաստող, մենթոր՝ Հայարվիի Խաչատրյան

Ուսուցիչ՝ Կարինե Գյուլագյան

Երևան 2023

Ներածություն .....	1
Գլուխ 1	
1.Միջառարկայական կապերը կենսաբանության դասապրոցեսում.....	4
Գլուխ 2	
2. Միջառարկայական կապերի կարևորությունը .....	5
Գլուխ 3	
3. Միջառարկայական կապերիդերն ուսումնական գործընթացում.....	6
Գլուխ 4	
4. Միջառարկայական կապերի առավելությունները.....	9
6.Եզրակացություն.....	12
Գրականություն .....	15

Աշխատանքի արդիականությունը.

Ողջ աշխարհում տեղի են ունենում կրթական ոլորտի փոփոխություններ, որոնց նպատակն է կրթությունը մոտեցնել իրական կյանքին: Նոր պահանջներ են առաջադրվել կրթության կազմակերպման եղանակներին ու ձևերին, դրա բովանդակությանը: Փոխվել են կրթության նպատակը, խնդիրները, ուսուցչին ներկայացվող պահանջները: Ուսուցման գործընթացում անհրաժեշտաբար ներդրվում են ուսուցման նոր տեխնոլոգիաներ, մեթոդներ, որոնց միջոցով դպրոցը պետք է պատրաստ լինի պատասխանելու ժամանակի մարտահրավերներին: Հաճախ ենք ականատես լինում դեպքերի, երբ սովորողը զինված է կայուն գիտելիքներով, սակայն անհրաժեշտության դեպքում դժվարանում է դրանք կիրառել: Դրա պատճառներից մեկն այն է, որ դպրոցում սովորողի ստացած կրթությունը խաթարում է աշխարհի ամբողջականության վերաբերյալ իր պատկերացումները:[1]

Դեռևս վաղ տարիքից են երեխաների մեջ ձևավորվում իրենց հատուկ պատկերացումներն աշխարհի մասին: Սակայն դպրոց ընդունվելով, փոխվում է այդ ամբողջական ընկալումը, և դրվում են սահմաններ՝ առարկաների տեսքով: Դպրոցում ձեռք բերած գիտելիքը շարունակում է մնալ որպես կտրտված տեղեկությո՝ տարբեր ուսումնական առարկաների տեսքով, և սովորողը այդպես էլ չի կարողանում կրթական մյուս աստիճաններում դրանցից հավաքել ամբողջը: Փոխարենն ավելանում է գիտելիքի քանակական կողմը, որը հանգեցնում է մտային ավելորդ ծանրաբեռնվածության: Իսկ չէ՞որ կրթության նպատակն է պատրաստել լայն մտահորիզոնով քաղաքացու, որն օժտված լինի յուրացված գիտելիքները համակարգելու և, ըստ անհրաժեշտության, դրանք կիրառելու կարողությամբ:

---

[13դում](#)

Դպրոցում երեխան պետք է ունենա համակարգված և ամբողջական ընկալում բնության և դրա երևույթների վերաբերյալ: Անհրաժեշտ է, որ նա առարկան և երևույթը քննի տարբեր կողմերից՝ զգայական, գեղարվեստական, գիտական և այլն: Ճարունակ փոխում է գործունեության ոլորտը, որն էլ հետաքրքիր է դարձնում աշխատանքը: Առարկաների միջև կապերն ավելի ու ավելի են սերտանում, լրացնում միմյանց ու նպաստում երևույթի բազմակողմանի (տարբեր առարկաների տեսքով) դիտարկմանը և ընկալմանը:

Գիտելիքների միավորումը և համադրումը տեղի են ունենում տարբեր եղանակներով: Այն դեպքում, երբ կապեր են ստեղծվում տարբեր ուսումնական առարկաներին վերաբերող գիտելիքների միջև, ընդունված է անվանել միջառարկայական կապեր:

Միջառարկայական կապերին դիմելը Կոմենսկին համարում էր «գիտություններից մեծ հարստություններ ձեռք բերելու» լավագույն միջոց և գտնում էր, որ «Այն ամենը, ինչը փոխադարձաբար կապված է, նույնպիսի կապի մեջ էլ պիտի դասավանդվի»:

Աշխատանքի նպատակն է.

Ներկայացնել և հիմնավորել միջառարկայական կապերի, ինտեգրված դասերի կարևորությունը ուսումնառության գործընթացում և կիրառման նպատակահարմարությունը ուսուցման ժամանակ:

Խթանել սովորողների ուսումնական հետաքրքրությունները նպաստելով ներգրավածությանը:

Ջետազոտության խնդիրն է ներկայացնելով ուսուցման գործընթացում միջառարկայական կապերի իրականացման կարևոր նշանակությունը.

կոնկրետ օրինակների միջոցով ցույց տալ դրա արդյունավետությունը, պլանավորել և իրականացնել ինտեգրված դասեր ուսուցման ժամանակ:  
Կիրառել դասավանդման տարբեր մոդելներ:

Միջառարկայական կապերը ստեղծում են լայն հնարավորություն մինևույն նյութը տարբեր առարկաների ասպեկտից դիդեյու և եզրահանգումներ անելու: Ինչն էլ հնարավորություն է տալիս

- ❖ Խթանել սովորողների մոտ բարձր կարգի մտածողություն:
- ❖ Ջամակարգել գիտելիքները ԲՏՃՄ առարկաների շրջանակում:
- ❖ Բարձրացնել ուսումնառության որակը:

## **Գլուխ 1**

### **Միջառարկայական կապերը կենսաբանության դասապրոցեսում**

Կենսաբանության դասի ընթացքում ուսուցչի կողմից միջառարկայական կապերի ստեղծման նշանակությունը սովորողների համակողմանի զարգացման և ուսումնական թեմայի առավել խորքային ընկալման և ճանաչողության ձևավորման վրա:

Ի՞նչ առավելությունն ունի միջառարկայական կապերի ապահովմամբ կենսաբանության դասապրոցեսը միջին դպրոցում:

Հաշվի առնելով կրթության արդիականացման հիմնական ուղղությունները, որոնք կենտրոնացած չեն միայն գիտելիքի վրա, այլ ուսումնական գործընթացի արդյունքների մեջ ներառում են նաև մի շարք կարողունակությունների ձեռք բերում՝ կարող ենք ասել, որ դասը, որպես ուսումնական գործընթացի կազմակերպման հիմնական ձև, ձեռք է բերել բովանդակային նոր կառուցվածք:

Ուսումնական գործընթացում սովորողների մղումները ձևավորվում են նրանց կարիքների և հետաքրքրությունների հիմքով՝ ուսուցիչը պետք է բոլոր ջանքերն ուղղի սովորողների ճանաչողական հետաքրքրությունների զարգացմանը: Գնահատական գործընթացներ են՝ ընկալումը, ուշադրությունը, երևակայությունը, հիշողությունը, մտածողությունը, որոնք ցանկացած գործունեության կարևորագույն բաղադրիչներն են: Իր կարիքները բավարարելու՝ շփվելու, սովորելու և աշխատելու համար մարդը պետք է ընկալի աշխարհը, ուշադրություն դարձնի գործունեության որոշակի բաղադրիչների վրա, պատկերացնի, թե ինչ է պետք անել, ինչ հիշել, մտածել և արտահայտվել: Հետևաբար, առանց ճանաչողական կարողությունների, մարդու գործունեությունը անհնար է: Գնահատական կարողությունները զարգանում են գործունեության մեջ:

Այս նկատառումներից ելնելով՝ կարող ենք ասել, որ սովորողի ճանաչողության զարգացման համար բավականին արդյունավետ միջոց է ուսումնական գործընթացում միջառարկայական կապերի կիրառումը: Միջառարկայական կապերի օգտագործումը առավել դյուրին է դարձնում սովորողների հետաքրքրությունների, աշխարհայացքի ձևավորումը և այլ մանկավարժական խնդիրների լուծումը:

## Գլուխ 2

### Միջառարկայական կապերի կարևորությունը

Սույն հետազոտական աշխատանքի կարևորության համար հիմք է հանդիսացել ուսումնական գործընթացում գիտելիքի հաղորդմանը զուգահեռ սովորողների ճանաչողական կարողությունների, մետաճանաչողության զարգացումը, ինչին մեծ չափով նպաստում է ինտեգրված ուսուցումը:

Առանցքային կոմպետենցիաներ .

- ★ Լեզվական գրագիտություն և կարողունակություն
- ★ Սովորել սովորելու կարողունակություն
- ★ Ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն

Որևէ առարկայի պատրաստման տեխնոլոգիական գործընթացի վերլուծությունը ցույց է տալիս, որ, միջառարկայական կապերի նպատակային օգտագործմամբ, ուսուցման գործընթացում տեղի են ունենում որոշակի տեղաշարժեր`

- ճանաչողական ու կրթադաստիարակչական առումներով հարստանում է դասի բովանդակությունը,
- առավել հետաքրքիր ու հաճելի է դառնում դասը,
- բարձրանում է դասի հագեցվածությունը,
- բացահայտվում են գիտելիքներ կիրառելու ոլորտները,
- կատարվում են հիմնավորված եզրակացություններ,
- բարձրանում է ուսուցչի վարպետության մակարդակը,
- հարստանում է ուսուցչի գիտամեթոդական զինանոցը,
- զարգանում է ուսուցման գործունը,
- առավել նկատելի են դառնում հետադարձ կապերը,
- ձևավորվում ու զարգանում է սովորողների ճանաչողական ինքնուրույնությունը և այլն:[1]



### **Գլուխ 3**

#### **Միջառարկայական կապերի դերն ուսումնական գործընթացում**

Այսօր գիտելիքից բացի սովորողից պահանջվում է տիրապետել մի շարք առանցքային կարողունակությունների, որոնք թույլ կտան վերջինիս ճիշտ դրսևորվել, կողմնորոշվել կյանքի ցանկացած իրավիճակում, ինչը պակաս կարևոր չէ: Սովորողը պետք է լինի ճկուն, կարողանա ընտրել, համեմատել, պարզաբանել, հիմնավորել, փաստարկել, հետազոտել ու կշռադատել: Այս ամենն իմանալն ու կարողանալը կնշանակի՝ ունենալ գիտակցական բարձր մակարդակ, ճանաչողական կարողություններ, ինչն էլ այսօր կարևոր է կրթական համակարգում:

Ճանաչողական կարողությունները միմյանցից առանձին չեն դրսևորվում, սա մի բարդ համակարգ է, ուստի դրանց զարգացման արդյունավետ ուղիներից մեկն էլ ինտեգրված ուսուցումն է: Օրինակ՝ կենսաբանության ուսումնասիրության ժամանակ սովորողների մոտ ձևավորվում են բարդ ճանաչողական ունակություններ, որոնք հիմք են դառնում մտածողության, խոսքի և հաղորդակցման հմտությունների ձևավորման համար: Արդեն մյուս բնագիտական առարկաների ուսուցման ընթացքում այդ մտածողությունը հիմք է դառնում այլ կարողունակությունների զարգացման: Կարող ենք ասել, որ ցանկացած ուսումնական առարկա փոխլրացնում է մյուսին, դառնում շարունակողը, լրացնողն ու ամբողջացնողը: Նորօրյա աշխարհում մեծ նշանակություն ունի առարկաների և գիտությունների համագործակցությունը՝ միջառարկայական կապերը: Ուսուցման արդյունավետութունը բարձրացնում են ոչ թե մեխանիկորեն սերտած ինտեգրացված տեղեկություններով, այլ իրականություն միջառարկայական կապերով: Ուսուցման արդյունավետութունը բարձրացնելու համար անհրաժեշտ է ոչ թե ինտեգրացում, այլ ուսումնական առարկաների ընթացակարգային կորդինացում միջառարկայական կապերի, որոնք արտացոլում են բնության և հասարակության մեջ առկա կապերը<sup>1</sup>: Կարող ենք ասել, որ միջառարկայական կապերն էլ ավելի արդյունավետ են ԿՁՈԻ (Կոմպետենցիաների ձևավորման ուղղված) դասերի պարագայում:

<sup>1</sup> И. П. Подласый. Педагогика. Москва. 2000, с. 233.

Ավանդական դասին կարևորվում է ուսումնական առարկաների անջատ ուսուցումը, կարողունակությունների ձևավորմանն ուղղված դասին առարկաների ուսուցման միջոցով զարգացվում են վերաառարկայական հմտություններ՝ խնդիրների լուծում, քննադատական մտածողություն, համագործակցություն<sup>1</sup>:

Միջառարկայական կապեր ստեղծելու արդյունավետ եղանակ է ինտեգրված դասերի անցկացումը: Ինտեգրված դասը դասի հատուկ տեսակ է, որի շրջանակներում մեկ հասկացության ուսուցման ժամանակ տեղի է ունենում մի քանի առարկաների միաժամանակյա ուսուցումը: Այսպիսի դասի ընթացքում միշտ առանձնացվում է առաջատար առարկան, որը հանդես է գալիս որպես ինտեգրիչ, որը նպաստում է ուսուցանվող նյութի խորացմանը, ընդլայնմանն ու հստակեցմանը: Ինտեգրված դասերը կարող են միավորել ինչպես տարբեր առարկաներն իրենց ամբողջ ծավալով, այնպես էլ

առանձին առարկաների բաղադրիչներ: Ինտեգրված դասի պլանավորումը ենթադրում է տարբեր առարկաների ուսուցիչների համագործակցություն: Տարբեր առարկաներից վերցրած բաղադրիչները, որոնք միավորվում են մեկ դասի մեջ, կազմում են մեկ համակարգ, որի շուրջ հավաքվում և մի նոր համակարգ է դառնում ուսումնական նյութը: Որպեսզի ինտեգրվեն, այսինքն՝ ճիշտ ձևով միավորվեն ուսումնական գործընթացի բաղադրիչները, պետք է կատարվեն այնպիսի գործողություններ, որոնք ի սկզբանե ունեն ստեղծագործական բնույթ:

Նման դասերի ժամանակ կարելի է իրավիճակներ ստեղծել, որ սովորողը մտածի և ինքնուրույն հասկանա առաջադրված խնդրի լուծման եղանակները: Այս գործընթացի ժամանակ վերջինիս մեծապես կարող է օգնել մետաճանաչողությունը:

Զարգացած մետաճանաչողություն ունեցող սովորողը ջանք է գործադրում խնդրի տեսակը ճանաչելու, առաջադրանքը վերլուծելու, իրեն արդեն

<sup>1</sup> Մասնակցային դարոց Ա. Սարուխանյան, Կ.Մարգարյան, Մասնակցային մշակույթ և կրթությունների վրա հիմնված ուսուցում, ռեսուրսագրքույկ, Երևան, 2020:

իսկ ծանոթ խնդիրների հետ համեմատելու, նմանությունները և տարբերությունները որոշելու հարցում, իսկ մյուս դեպքում՝ այն արդեն իսկ մետաճանաչողական փորձի առկայություն է ենթադրում, երբ աշակերտը, առանց ջանք գործադրելու, կարողանում է որոշել խնդրի լուծման համար անհրաժեշտ ճանապարհը<sup>1</sup>:

---

1. [Յոուս](#)

## **Գլուխ 4**

### **Միջառարկայական կապերի առավելությունները**

Միջառարկայական կապերը ուսուցման գործընթացում իրականացնում են մեթոդոլոգիական, կրթական, զարգացնող, դաստիարակչական, կառուցողական գործառույթներ:

Ուսուցիչը միջառարկայական կապերի միջոցով նպաստում է սովորողների գիտելիքների ինտեգրմանը, բազմակողմանի զարգացմանը, ինտելեկտի կատարելագործմանը, մտահորիզոնի ընդարձակմանը: Միջառարկայական կապերը խթանում են սովորողների՝ դիտարկելու, հետազոտելու, հայտնագործելու, ստեղծագործելու, եզրահանգելու կարողությունների ձևավորմանը<sup>1</sup>:

Ինտեգրված ուսուցումը, հիմնվելով հատուկ և ընդհանուր կրթության սկզբունքների վրա, պետք է ունենա զարգացնող, դաստիարակող բնութագիր, որը ենթադրում է սովորողների բարոյական գաղափարների, վարքի համարժեք ձևերի մշակում՝ բոլոր մասնակիցների ներառմամբ կրթական գործընթացում<sup>2</sup>:

Միջառարկայական կապերի ապահովումը բավականին արդյունավետ են նաև կենսաբանության դասավանդման պարագայում: Օրինակ՝ կարելի է իրականացնել ինտեգրված դաս կենսաբանություն - քիմիա, կենսաբանություն - ֆիզիկա, կենսաբանություն - աշխարհագրություն, կենսաբանություն - մաթեմատիկա, կենսաբանություն - քիմիա - ֆիզիկա, կենսաբանություն - ֆիզիկա - քիմիա - աշխարհագրություն ուսումնական առարկաներից: Այս պարագայում սովորողներին կարելի է հանձնարարել ստեղծագործական բնույթի առաջադրանքներ՝ շեշտը դնելով հաղորդակցական հմտությունների զարգացման վրա: Կարելի է դասը վարել հարցադրումների մեթոդի, խմբային քննարկումների, դերախաղի միջոցով:

---

<sup>1</sup> Иванов, В.Г. Междисциплинарные связи в образовательном процессе / В.Г. Иванов, Т.А. Иванова // Среднее профессиональное образование. Москва, 2000, № 12. с. 45.

<sup>2</sup> Екжанова Е. А. Резникова Е. В. Основы интегрированного обучения: Учебное пособие для вузов, Москва. 2008, с. 52.

Սովորողները «Ձուր» թեմայի

շուրջ կպատրաստեն հարցադրումներ, ուսուցիչը դասարանը կբաժանի չորս խմբի. առաջին խումբ «Ձուրը կենդանի օրգանիզմներում», երկրորդ խումբ «Ձրի քիմիական հատկությունները», երրորդ խումբ «Ձրի ֆիզիկական հատկությունները», չորրորդ խումբ «Ձուրը բնության մեջ» հաջորդիվ արդեն նշված առարկաների տեսանկյունից խոր կուսումնասիրեն նյութը, միմյանց հարցեր կտան, խմբաին քննարկումների միջոցով կբնութագրեն, կհամեմատեն, կհատկանշավորեն սահիկաշարին պատկերված նկարները, փատերը և հիմնավորումները կմտապահվեն սովորողների կողմից:

հնտեգրված դասի ավարտին կարելի է գրանցել հետևյալ վերջնարդյունքները.

- սովորողները հաղթահարեցին խմբում համագործակցելու կարողությունը
- ներառարկայական և միջառարկայական կապերի պարուրածն գարգացում
- սովորողները կարևորեցին նույն դասանյութը տարբեր առարկաների տեսանկյունից դիտարկել
- սովորեցին նոր հասկացություններ և տերմիններ
- ինքնուրույն հարցադրումների ձևակերպում
- աշխատանքին մոտեցան ստեղծագործաբար:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ ավանդական դասից դուրս ԿՁՈՒ դասի ընթացքում միջառարկայական կապերի ապահովումը սովորողին հնարավորություն տվեց ակտիվ լինել դասապրոցեսին, համատեղելի դարձնել սեփական հետաքրքրությունները, երազանքները ուսումնառության գործընթացի հետ: Կենսաբանության դասին միջառարկայական կապ կարելի է ապահեվել ցանկացած առարկայի հետ: Այսպես բարձրանում է սովորողի սովորելու

մոտիվացիան, աշխատունակությունը:

Ինտեգրված դասերի կազմակերպման ընթացքը բավականաչափ արդյունավետ կարող է լինել նաև մասնակից ուսուցիչների համար: Սա համագործակցման ու փորձի փոխանակման անմիջական գործընթաց է, որի ժամանակ բոլոր ուսուցիչները հավասարաչափ ջանք են գործադրում, որպեսզի ուսուցման գործընթացը լինի արդյունավետ:

Միջառարկայական կապերի նպատակային օգտագործումը պետք է.

- պարտադիր լինի բոլոր ուսուցիչների համար,
- լինի միայն ուսումնական նպատակին հասնելու միջոց,
- գործադրվի միայն այն ժամանակ, երբ դրա անհրաժեշտությունը կա,
- ինքնանպատակ չլինի,
- զուգակցված լինի ուսուցման դասական ձևերի հետ,
- դասի հիմնական նպատակից չշեղի աշակերտների ուշադրությունը:

## **Եզրակացություն**

Կրթական համակարգում շարունակաբար կատարվող բարեփոխումները պահանջում են նոր մեթոդոլոգիական մոտեցում կազմակերպչական և բովանդակային նշանակության խնդիրների լուծման ժամանակ, որը կնպաստի կրթության որակի բարձրացմանը: Կարևորելով ուսուցման գործընթացի ճիշտ կազմակերպման նշանակությունը՝ կարելի է ևս մեկ անգամ

կարևորել միջառարկայական կապերի դերը: Կրթության կարևորությունը գնահատելով՝ պետք է ընդունել, որ կրթության միջոցով կարելի է հասնել հասարակական մտածողության, հոգևոր- բարոյական և մշակութային արժեքների զարգացման: Ինտեգրված ուսուցումը, ապահովելով տարբեր առարկաների գիտելիքների համակցումը, նպաստելու է հետազոտական հմտությունների, ստեղծագործական կարողությունների ձևավորմանը և դրանց հիմքի վրա նրանց կայուն զարգացման իրականացանը:

Ինտեգրված ուսուցման մեջ գլխավորը թեման է, որը զարգացնում է ուսուցչի ստեղծագործական կարողությունները, տեսական և գործնական հմտությունները, ձևավորում ուսուցիչ-աշակերտ համագործակցությունը, նպաստում դասարանական աշխատանքների արդյունավետության բարձրացմանը, ըստ աշակերտների կարողությունների՝ շերտավորված ուսուցման իրականացմանը: Հարկավոր է հաշվի առնել թեմայում ներառված տեղեկատվության հաջորդականությունն ու շարունակականությունը:

Ինտեգրված դասեր կազմակերպելիս հարկավոր է հաշվի առնել, որ ինտեգրված դասի առանձնահատկությունն այն է, որ այդ դասերը կառուցվում են մեկ առարկայի հիմքի վրա, որն էլ գլխավորն է համարվում: Մյուսները դրան ինտեգրվում են՝ օգնելով ավելի խորը ուսումնասիրելու գլխավոր առարկայի կապերը, ավելի լավ հասկանալու ուսումնասիրվող առարկայի էությունը, կապը առօրյա կյանքի հետ և հնարավորություն ունենալու ստացած գիտելիքները գործնականում կիրառելու:

Առաջարկվում է.

Չաճախ իրականացնել միջառարկայակն կապերով դասեր, որոնք նպաստում են աշխարհի ամբողջական պատկերի ձևավորմանը, բնության մեջ տեղի ունեցող երևույթների միջև կապերի բացահայտմանն ու ընկալմանը:

Ինտեգրված դասերը թուլացնում են աշակերտների լարվածությունը, հանում են ձանձրույթը, մեծանում է հետաքրքրությունը, քանի որ նրանք մի գործունեության ձևից անցնում են մեկ այլ գործունեության:

Միջառարկայակն կապերի ստեղծման համար ավելի բարենպաստ պայմաններ կարող են ստեղծել արտադասարանական պարապմունքները, ուստի նպատակահարմար կլինի նմանօրինակ դասեր էլ ավելի շատ անցկացնել:

Ցանկալի է, որ դասերի ընթացքում սովորողի համար դրվեն այնպիսի խնդիրներ, որոնք կստիպեն վերջինիս մտածել, լուծումներ գտնել ինքնուրույն: Այսպես կարելի է բարձրացնել սովորողի աշխատունակությունն ու հիմք նախապատրաստել մետաճանաչողության զարգացման համար:

Պետք է ամեն կերպ խրախուսել ուսուցիչների համագործակցությունը ինտեգրված դասերի անցկացման շրջանակներում:

Սովորողին ինքնուրույնություն տալով՝ մենք ապահովագրում ենք նրա բարեկեցիկ ապագան, ուստի աշակերտակենտրոն աշխատելաոճը պետք է գերակայի:



## Գրկանություն

1. Մասնակցային դպրոց Ա. Սարուխանյան, Կ.Մարգարյան, Մասնակցային մշակույթ և կոմպետենցիաների վրա հիմնված ուսուցում, ռեսուրսագրքույկ, Երևան, 2020:
2. [http://geopolitika.am/dir/wp-content/blogs.dir/1/files/2021\\_6\\_117\\_119.pdf](http://geopolitika.am/dir/wp-content/blogs.dir/1/files/2021_6_117_119.pdf)  
Մետաճանաչողությունը կրթության մեջ:
3. Екжанова Е. А. Резникова Е. В. Основы интегрированного обучения: Учебное пособие для вузов, Москва. 2008.
4. И. П. Подласый. Педагогика. Москва. 2000.
5. Иванов, В.Г. Междисциплинарные связи в образовательном процессе / В.Г. Иванов, Т.А. Иванова // Среднее профессиональное образование. Москва, 2000, № 12.